

մենից եւ Լեհաստանի այլ մասերը իբրեւ այցելու: Կաթողիկոսը ընդունած է Քահանայապետին նուիրակները մեծ բարեացակամութեամբ. հիւրամեծարած է նաեւ Դոմինիկեանները (Միաբանողները) իբրեւ եղբայրակիցներ: Նոյն վերաբերմունքը կ'ակնկալէ (փոխադարձաբար) Լեհաստանի Հայոց համար:

Իւր նուիրակը կրած է նեղութիւններ եւ անհարթութիւններ Տէր Նիկողայոս անարժան եպիսկոպոսի կողմէն. որ բանադրուած է. որ եպիսկոպոսութիւնը ձեռք բերած է սիմոնիականութեամբ. որ շատ անգամ էջմիածին կանչուած է, բայց միշտ դանդաղ է անսատող եւ ժողովրդեան ու կղերին մէջ անհամաձայնութեան պատճառ: Եկեղեցիները փակել տուած է եւ խափանած սուրբ խորհուրդները. եւն եւն: Մեռելները մնացած են անթաղ: Շատ պիտի բաղձար անձամբ գալ առոտս սրբազան Քահանայապետին. բայց հնարաւորութիւն չկայ: Կ'ուզարկէ իւր կողմէն Տէր Սիմէոն իւր սիրելի որդեակը, Լեհաստանի ազնիւ հայ երէցը, որ եկած էր կաթողիկոսին իբրեւ պատգամաւոր նոյն ժողովրդեան, խօսելու համար նոյն եպիսկոպոսին մասին:

Նամակին վերջը կ'ըսէ. կ'ապրինք սուրբ, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցւոյ հետ համամիտ. կը նղովենք բոլոր հերետիկոսները՝ զԱրիոս, զՄակեդոն, զՆեստոր, զԵւտի-